ԱՎՏՈԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՓԱԿ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՓՊՄԾԶԲ-17/193-13

ք. Երևան 13-ը օգոստոսի 2024թ

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և «Հայաստանի ԴՕՍԱԱՖ» համահայկական հայրենասիրական հասարակական կազմակերպության «Արմավիրի տեխնիկական դպրոց» ՍՊԸ-ն, ի դեմս կազմակերպության տնօրեն Պ. Հովսեփյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը սահմանում են, որ՝

1.1 Կատարողը մասնակցել է Պատվիրատուի կողմից «Ավտոդպրոցների կողմից մատուցվող ծառայությունների» ձեռքբերման N ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՓՊՄԾԶԲ-17/193 ծածկագրով կազմակերպված պետական գաղտնիք պարունակող փակ պարբերական մրցույթի ընթացակարգին (այսուհետև՝ ընթացակարգ) և գրանցվել է որպես հնարավոր մասնակից:

1.2 Կատարողի կողմից հայտ ներկայացնելը պարտադիր չէ:

1.3 Հայտը Կատարողի կողմից ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող յոթ օրացուցային օրվա ընթացքում՝ ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

1.4 Կատարողը կարող է դադարեցնել փակ պարբերական մրցույթի սկզբնական պայմանագիրը՝ դրա մասին գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ծանուցելով Պատվիրատուին: Սկզբնական պայմանագրի դադարեցումն ավտոմատ կերպով չի դադարեցնում դրա հիման վրա նախկինում կնքված պայմանագրերը: Սկզբնական պայմանագիրը դադարում է, դրա վերաբերյալ դիմումը Պատվիրատուի մոտ մուտքագրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Այդ ընթացքում Կատարողի մասին տվյալները հեռացվում են սկզբնական պայմանագիր կնքած անձանց ցուցակից:

2. Կողմերի պատասխանատվությունը

2.1 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.2 Կատարողը պարտավորվում է չհրապարակել (ցանկացած ձևով) որևէ մեկին (այդ թվում նաև հարազատներին) պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները, որոնք կվստահվեն կամ հայտնի կդառնան սույն ընթացակարգի շրջանակներում:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

3.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն համաձայնագրի անբաժանելի մասը: Կատարողի վավերապայմանների փոփոխության դեպքում սույն պայմանագրի փոփոխություն չի կնքվում: Կատարողը նոր վավերապայմանների մասին գրավոր ծանուցում է Պատվիրատուին:

3.3 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

3.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում:

3.5 Սույն պայմանագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 02522157 էլ. հասցեն՝ gnumner@mil.am ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ _____ Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	«Հայաստանի ԴՕՍԱԱՖ» համահայկական հայրենասիրական հասարակական կազմակերպության «Արմավիրի տեխնիկական դպրոց» ՍՊԸ ք. Արմավիր, Բաղրամյան փ. շենք 5 ՀՎՀՀ 04406276 էլ. հասցեն՝ avtobam@mail.ru հեռ. 094808505 Տնօրեն _____ Պ. ՀՈՎՍԵՓՅԱՆ